Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆԸ

(ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐՎԱ ԲԱԺԻՆ)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՍԽՀ ԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆ 1936

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
1. Սոցիալիզմը հաղթանակեց	3
2. Կյանքը դարձել է ավելի լավ, կյանքն ավելի ուրախ է դարձել	7
3. 1936 թիվը սոցիալիստական տարի	11
4. Կառուցենք սեփական ուժերով սեփական միջոցներով	13
5. Մեր փոխառությունները	15
6. Յերկրորդ հնգամյակի փոխառությունը (չորրորդ տարվա բաժին)	19
Ինչպես է տարբերվում նոր փոխառությունը նախորդներից	19
ԽՍՀՄ վոչ մի քաղաքացի առանց յերկրորդ հնգամյակի փոխառության (չորրորդ տարվա բաժին) պարտատոմսի	22
7. Նախորդ մասսայական փոխառությունների փոխանակումը (կոնվերսիա)	23
Ինչպես պիտի կատարվի պարտատոմսերի փոխանակումը	25

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ՀԱՍՍԱՐ
11-28204

Սրբ. Ա. Հախվերդյան
Գլավլիտ № 2167

Գյուղհրատի տպարան
Պատվեր № 470 տիր. 2000

30 JAN 2018

ՅԵՐԿՐՈՐԴՀՆԳԱՄՅԱԿԻ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆԸ

(ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐՎԱ ԲԱԺԻՆ)

ՍՈՑԻԱԼԻԶՄԸ ՀԱՂԹԱՆԱԿԵՑ

Նայեցեք մեր յերկրի քարտեզին. տեսեք, թե ինչպես են փոխվել մեր քաղաքները, մեր գյուղերը։

Վորպեսզի նկարագրենք, թե ինչեր կատարվեցին մեր յերկրում հեղափոխության տարիներին, ինչեր մենք կառուցեցինք քաղաքներում և գյուղերում, ինչով մենք հարստացրինք մեր արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը և կենցաղը, ապա անհրաժեշտ կլինի բազմաթիվ հարյուրավոր եջեր։

Մենք ստեղծեցինք սոցիալիստական խոշոր ինդուստրիա։ ԽՍՀ Միությունը տեխնիկապես հետամնաց յերկրից դարձավ բարձր զարգացած արդյունաբերական յերկիր։

Արդյունաբերության արտադրանքի տեսակարար կշիռն ամբողջ ժողովրդական տնտեսության ընդհանուր արտադրանքի մեջ 1913 թվին կազմում եր 42,1 տոկոս, իսկ 1935 թվին 80,3 տոկոս։ Խոշոր արդյունաբերության արտադրանքը 1933 թվի համեմատությամբ – 1934 թվին աճեց 20,3 %-ով, 1935 թվին, 22 %-ով, իսկ 1936 թվին նախատեսնված է 24,4 %-ով աճ։

Արդյունաբերական արտադրանքի աճման տեմպերի այդպիսի հսկայական արագությունը ձեռք է բերվել մեր կողմից—մեր յերկրի ժողովուրդների աշխատանքով ստեղծված նոր առաջնակարգ տեխնիկայի տիրապետման հիման վրա։

Խոշոր արդյունաբերության աշխատանքի արտադրողականությունը 1935 թվին աճեց 16,2 %-ով։ 1936 թվի առաջին ամիսները ցույց տվին ինքնազոհության բացառիկ որինակներ — նոր տեխնիկան տիրապետելու, աշխատանքի արտադրողականությունը լուրջ կերպով բարձրացնելու, ինչպես և արտադրանքի վորակը լավացնելու համար մղած պայքարում։

1934 թվին, մի շարք տարիներում հետ մնացող սև մետալուրգիան առաջին անգամ կատարեց իր տարեկան պլանը, տալով յերկրին 10,4 միլիոն տոննա թուջ, իսկ 1935 թվին նոր տեխնիկայի տիրապետման հիման վրա նա խոզոր քայլ կատարեց դեպի առաջ, տալով 12,5 միլիոն տոննա թուջ և նույնքան ել պողպատ։

1935 թիվը դարձավ վորպես շրջադարձի տարի սննդի և թեթև արդյունաբերության համար։ Արտադրության այդ ճյուղերի արտադրանքի աճը 1934 թվի համեմատությամբ, կազմեց—սննդարդյունաբերությունը 22,3 տոկոսով և թեթև արդյունաբերությունը 11,8 տոկոսով,

Վերջին տարին վճռական հաղթանակների հասավ սոցիալիստական տրանսպորտը, դառնալով մեր յերկրի ժողովրդական տնտեսության առաջավոր ճյուղը։ Տրանսպորտը դերակատարեց որական (в сутки) 80 հազար վագոն բառնալու ստալինյան առաջադրանքը և այժմ անընդհատ կատարվում է Կրեմլում տեղի ունեցած ընդունելության ժամանակ լավագույն յերկաթուղայինների կողմից ընկ. Ստալինին տված խոստումը — բարձրացնել որական բարձումը մինչև 100 հազար վագոնի։

Սոցիալիստական ծանր արդյունաբերությունը, վորը հանդիսանում է ամբողջ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման հիմքն ու լծակը, հաղթահարելով յուրացման դժվարությունները, հաստատորեն ընթանում է դեպի հետագա վճռական հաղթանակներ, դեպի «հասնել և անցնել» խնդրի լիակատար լուծումը։ Մի շարք կարևոր ճյուղերի արտադրանքների արտադրողականությամբ մեր արդյունաբերությունը 1935 թվին արդեն անցավ առաջին տեղը Յեվրոպայում և յեկրորդ տեղը — աշխարհում։ 1935 թվին ելեկտրոեներգիայի մշակման գծով ԽՍՀՄ-ն բռնել եր յերրորդ տեղն աշխարհում, ածուխի — չորրորդ, թուջի — յերկրորդ, պողպատի — յերրորդ, շոգեքարշերի և կոմբայնների արտադրությամբ — առաջին տեղն աշխարհում։

Մենք արդեն գիտենք ամեն ինչ արտադրել մեր սեփական ֆաբրիկաներում և գործարաններում, մինչև նույնիսկ ամենաբարդ մեքենաները։ ԽՍՀՄ-ն դարձել է հզոր ինդուստրիալ յերկիր, կապիտալիստական աշխարհից տեխնիկական տնտեսական իմաստով միանգամայն ինքնուրույն և անկախ յերկիր։ Այդ հաջողության նշանակությունը հասկանալու համար բավական է հիշել, վոր հին ցարական ժամանակներում Ռուսաստանը չեր կարողանում արտադրել նույնիսկ հասարակ գերանդիներ։ Այդպիսի

սիք ստացվում եյին Ավստրիայից։ Նույնիսկ դույլերը գնվում եյին արտասահմանից։

ԽՍՀՄ-ն ունի առաջնակարգ խոշոր սոցիալիստական արդյունաբերություն։ Սոցիալիստական ինդուստրիալիզացիայի հիման վրա, կուսակցությունը լուծեց պրոլետարական հեղափոխության ամենադժվարին խնդիրներից մեկը — մանր, փոշիացած գյուղացիական տնտեսությունը փոխադրել խոշոր սոցիալիստական գյուղացիական տնտեսության ռելսերի վրա։

Գյուղատնտեսական մթերքների արտադրության մեջ խորհտնտեսությունների յեվ կոլտնտեսությունների տեսակարար կշիռը 1935 թվին կազմում եր 93,6 տոկոս։ Խորհտնտեսությունների յեվ կոլտնտեսությունների ցանքերի տարածությունը 1935 թվին կազմում եր ԽՍՀՄ ամբողջ ցանքերի տարածության 91 տոկոսը։ Կոլեկտիվացման տոկոսն առ 1-ն մայիսի 1936 թվի կազմում եր 89 տոկոս։ Մեր յերկրում այժմ կա 245 հազար կոլեկտիվ տնտեսություն։

Շնորհիվ պրոլետարական պետության ոժանդակության, գյուղատնտեսության հիմքում դրված է հզոր տեխնիկական բազա։

1936 թվի հունվարի 1-ին մենք ունեյինք 4.376 ՄՏԿ կոլտնտեսային և խորհտնտեսային դաշտերում աշխատում են 380 հազար տրակտորներ, տասնյակ հազարավոր կոմբայններ և հարյուր հազարավոր այլ գյուղատնտեսական բարդ մեքենաներ։ Յեվ այդ բոլորը սեփական արտադրությունից։ Այդ բոլորն արտադրված են առաջին և յեկրորդ հնգամյակում կառուցված մեր սեփական խորհրդային գործարաններում։ Այդ գործարանների աշխատանքները շարունակվում են լավանալ և 1936 թվին մենք կստանանք որինակ, 61 հազար նոր կոմբայններ, այսինքն յերեք անգամ ավելի շատ, քան տվել եյին գործարանները 1935 թվին։ 1936 թվին մենք կստանանք 154,3 հազար տրակտորներ բացի այն 380 հազար տրակտորներից, վորոնք ունեցել ենք 1936 թվի սկզբներին։

Մենք ստեղծեցինք ամենախոշոր սոցիալիստական հողագործությունն աշխարհում։ Լենինի-Ստալինի կուսակցության ղեկավարությամբ, համատարած կոլեկտիվացման հիման վրա մենք լիկվիդացիայի յենթարկեցինք ամենաբազմաթիվ, ամենագազանային շահագործող դասակարգին — կուլակությանը։

Սոցիալիզմը հաղթանակեց ԽՍՀՄ-ում վերջնականապես և անվերադարձ կերպով։ Ժողովուրդների սեփականությանն անցան բոլոր ֆաբրիկաները, գործարանները, հողը և ընդերքը, Արտադրության գործիքներն ու միջոցները։

Սոցիալիստական հասարակական սեփականությունը — մեր խորհրդային հասարակարգի հիմքն է։

Մեր յերկրում ամբողջությամբ լիկվիդացիայի յեն յենթարկվել շահագործող դասակարգերը, չկա այլևս մարդու շահագործումը մարդու կողմից։ Մեր սոցիալիստական հասարակությունը բաղկացած է ապատ աշխատասեր բանվորներից, գյուղացիներից և ինտելիգենցիայից։

Ջնջվում են, չնայած դեռևս բոլորովին չեն ջնջվել, դասակարգերի միջև յեղած սահմանը և քանդվում, ընկնում են բանվորների, գյուղացիների և ինտելիգենցիայի միջև յեղած տարբերությունը։

Արմատական պատմական փոփոխությունները, վորոնք դարձրին ԽՍՀՄ վորպես անխորտակելի սոցիալիզմի յերկիր, արտացոլվում են մեր նոր սահմանադրության մեջ, վորի ստեղծողն ու վոգեշնչողը հանդիսանում է ժողովուրդների իմաստուն առաջնորդ ընկ. Ստալինը։

Մեր յերկրում, սոցիալիզմի յերկրում իսկական դեմոկրատիան հասել է բարձր մակարդակի բոլոր քաղաքացիների համար, անկախ նրանց սեռից, ազգությունից և ցեղից։ Ընդհանուր ուղղակի և հավասար ընտրությունների հիման վրա, գաղտնի քվեյարկությամբ մենք կընտրենք իշխանության բոլոր մարմինները։ Մեր սահմանադրությունը հանդիսանում է ամենադեմոկրատական սահմանադրությունն աշխարհում։

Մեծ են մեր հաղթանակները։ Սակայն վոչ մի բոպե չի կարելի հանգստանալ։ Յերկրի ներսում դեռևս մնում են սոցիալիզմին թշնամի ջախջախված դասակարգերի մնացորդները — տրոցկիստական զինովյեվական հակահեղափոխական տականքները։

Ստոր թշնամին, վորն անում է բաց հարձակում գործելու համար, չհրաժարվեց լրտեսական, դիվերսիոնական և տեռորիստական աշխատանքներից խորհրդային իշխանության և բոլշևիկյան կուսակցության հանդեպ, հենվելով արտասահմանյան կապիտալիստների դրամական և այլ ամեն տեսակի ոգնության վրա։ Ահա թե ինչու ընկ. Ստալինն ամբողջ կուսակցությանը, բոլոր կուսակցական և անկուսակցական բոլշևիկներին հրավիրում է մեծագույն զգոնության և հեղափոխական աչալրջության։

ԿՅԱՆՔՆ ԱՎԵԼԻ ԼԱՎ Է ԴԱՐՁԵԼ, ԿՅԱՆՔՆ ԱՎԵԼԻ ՈՒՐԱԽ Է ԴԱՐՁԵԼ

Մեծ են սոցիալիզմի հաղթանակները մեր յերկրում։

Սոցիալիզմը բերեց ունևոր և կուլտուրական կյանք մեր մեծ սոցիալիստական հայրենիքի բոլոր ժողովուրդների համար։ «Կյանքն ավելի լավ է դարձել, ընկերներ, կյանքն ավելի ուրախ է դարձել» (Ստալին)։

Ամբողջ յերկիրը սիրեց ստալինյան խոսքերը, ամբողջ յերկիրը յերգում է այդ խոսքերը ժողովրդական յերգերի մեջ, արտահայտելով իր բուռն սերը դեպի մեր իշխանությունը, դեպի մեր կուսակցությունը, մեր Ստալինը։

«Իսկ յերբ ուրախ ես ապրում, աշխատանքն ել առաջ է գնում» (Ստալին)։ Յեվ մենք կրկին անգամ վկա յեղանք այն բանին, թե ինչպես ամբողջ յերկրում բարձրացավ աշխատանքային յեռանդը։ Ծնվեց գործարանների և դաշտերի հարվածայինների, յերկաթուղային ստախանովականների, սավառնորդ ստախանովականների, սուզանավաստիներ ստախանովականների, սահմանապահ ստախանովականների միլիոնավոր բանակը։

Վերջին ժամանակներս Խարկովի «Մուրճ և մանգաղ» գործարանում բանվորների մեջ բաժանվեց հարցացուցակ՝ «գործարանի մեկ որվա կյանքը» նյութի մասին։ Ընտրված եր սովորական բանվորական որ և բանվորներին բաժանված եր 1000 հատ հարցացուցակ, թե ինչպես են նրանք այդ որն աշխատել, հանգրստացել, սովորել հարցերով։

Պատասխաններն արժանի յեն մեծ ուշադրության։

1000 մարդուց 500-ից ավելին գերակատարել եյին այդ որն իրենց արտադրական առաջադրանքները։ Ելեկտրոզոդման բանվոր Կորոստիլևը սահմանեց գործարանային նոր ռեկորդ, կատարելով որական պլանը 354 տոկոսով։ 550 հոգի հաճախել եյին կինո, 245 հոգի՝ թատրոն, 25 հոգի՝ թանգարան։ Մոտ 900 հոգի (հազարից) այդ որը կարդացել եյին գրքեր գեղարվեստական գրականությունից։ Անխտիր բոլորը թերթեր եյին կարդացել, իսկ 14 բանվորներ և բանվորուհիներ կարդացել եյին գեղարվեստական գրականություն ոտարերկրյա լեզուներով։

Այդպես է մեր գործարանի սովորական որը։ Այդպես է մեր

առորյան։ Կամ ահա թե ինչպես ե նկարագրում «Պրավդա»-ն այսորվա խորհրդային շարքային բանվորի կենցաղը։

Վերջին տարիները «Պետրովկա»-յի (Պետրովսկու անվան մետալուրգիական գործարան) հետ միասին աճեց Ֆրունզեյի անվան նոր բանվորական ավանը։ Հարթ, ուղիղ փողոցներ, պուրակներ։ Վառ լույսեր լուսամուտներում։

Կոտեջներում և մեծ, չորսհարկանի տներում ապրում են ավելի քան 30 հազար բնակիչներ — պողպատաձուլողներ, գաղային, հնոցային բանվորներ, գլանողներ, վարպետներ, տեխնիկներ և ճարտարապետներ։

Յերկրնակարանային կոտեջ՝ ծածկված սպիտակ կղմինդրով։ Շուրջը պտղատու ծառեր։ Այստեղ ապրում ե № 4 դաղգյահի թիթեղագործ Կուզմա Սեմյոնովիչ Գալիչեվը։ Դոնում ենք նրան ռադիոընդունիչը հավաքելիս։ Յեռում ե ինքնայեռը։ Ամբողջ ընտանիքը բոլորել ե կլոր սեղանի շուրջը։

Ալեքսանդրա Պետրովնան — Գալիչևի կինը — պատմում ե.

— Յերբեք մենք այսպիսի ուրախությամբ չենք դիմավորել նոր տարին։ Ամուսինս — ստախանովական, մեծ հարգանք ե վայելում գործարանում։ Դեկտեմբեր ամսին վաստակել ե 1400 ռուբլի։ Մենք հագնվեցինք, գնեցինք նաև նոր հագուստեղեն յերեխաների համար։ Ջեռք բերինք նոր բուֆետ, մեծ հայելի (տրյումո)...

Ամսական բարձր աշխատավարձերը նշվում են յուրաքանչյուր որ ամբողջ մամուլում։ Սվերդլովսկուց՝ Ուրալմաշ գործարանից հայտնում են № 1 մեխանիկական ցեխի բանվոր Բուշույեվը վաստակեց 2217 ռուբլի, Ռյաբցովը, 2186 ռուբլի, Ռյաբինինինը՝ 1679 ռուբլի, կարուսելչիկ Լապոտիշկինը՝ 1212 ռուբլի. մոդելային ցեխի մոդելչիկ Շուտկուսը 1499 ռուբլի։ Վարպետների աշխատավարձը տատանվում ե 1000 ից մինչև 2220 ռուբլու մեջ։

Մագնիտոգորսկուց գրում են. Մագնիտոգորսկի գործարանի բլյումինգի ոպերատորները վաստակել են. Ջերնիշը՝ 1760 ռուբլի, Տիշչենկոն՝ 1500 ռուբլի, Ոգորոդնիկովը՝ տասնինանը հերթափոխությունից—1130 ռուբլի։ Ջոդողներ Կոզլովը՝ 1450 ռուբլի, Սելիտովսկին՝ 1050 ռուբլի։ Դաղգյահի վրա աշխատող վարպետներ Շեվչուկը՝ 1797 ռուբլի, Նագիբեդան՝ 1018 ռուբլի, Նաուկը՝ 1953 ռուբլի։ Կամ վերցնենք մեր կյանքը լուսավորելու, մարդկանց կուլտուրական աճեցնելու տեսակետից։

Ապրում եր Մակեյեվկի գործարանում բանվոր Կորոբովը։

Քայլում եր նա մութ ու խուլ („Собачеевским") նրբանցքներով դեպի իր ավանը։ Նա ճանաչում եր այստեղ ամեն մի տուն և ամեն մի անկյուն։ Նրանք բոլորն ել մի դժբախտությամբ եյին ոծված և ծածկված եյին մի ընդհանուր թշվառությամբ։ Որվա կեսը գործարանին, կյանքի կեսը տիրոջը, իսկ վարձատրությունը պղնձյա գրոշ և կապարե քուն, կիսաքաղց ու անբախտ։ Այսպես եր Կորոբովի յերեկվա որը։ Իսկ այսորվա...

Կորոբովը Մակեյեվկի գործարանի ավագ վարպետն ե։ Արդեն 16 տարի յե, ինչ նա այդ պաշտոնումն ե։

Նրա վորդիները՝ Իլիա՝ նույն այդ գործարանի ամենալավ հնոցի պետը. Նիկոլայ՝ ակադեմիկ-մետալուրգ Պավլովի ասպիրանտը. Պավել՝ Դնեպրոպետրովսկի գործարանի հնոցային ցեխի պետը. իսկ աղջիկը Կլավդիան գտնվում ե արտասահմանում։ Նա մեկնել ե կատարելագործվելու իր մասնագիտության մեջ, նա ինժեներ ե։

Ինչպես հարուստ և ինչպես պայծառ ե ծաղկում կյանքն անցյալի այդ շարքային բանվորի ընտանիքում։

Իսկ ինչ ե կատարվում գյուղում։

— Դա, ինչվոր մի սքանչելի յերազ ե... ասաց քիչ ժամանակ առաջ Կրեմլի պալատի տրիբունից ծերունի կոլտնտեսական Հասան Ջումշուդ Ողլին, վերջացնելով հին անիծված կյանքի հաժեմատությունը ներկայի, նոր կյանքի հետ։ Կուլակների համար կատարած իր 55 տարվա աշխատանքի դիմաց ստացել ե վորպես վարձատրություն—կոտրված ձեռքը, իսկ կոլտնտեսությունում կատարած իր հինգ տարվա ազնիվ աշխատանքը բերեց Բուրդիստանցի 80-ամյա հովվին ունեվոր կյանք, ստախանովականի բարձը կոչում և ընկ. Ստալինի հետ հանդիպելու մեծագույն պատիվ։

Մյուս ծերունի հովիվ Նաֆաս Ցուլդաշևը, նույնպես մասնակիցը յերկրի լավագույն մարդկանց խորհրդակցությանը, այսպես բացատրեց իր նոր հարաբերությունը դեպի սոցիալիստական, կոլտնտեսային աշխատանքը. ամբողջ յերեսուն տարի նա արածեցրել ե բեկի նախիրը և հսկել ե բեկի ունեցվածքի վրա, վորը նրա համար ատելի յեր նույնքան, վորքան և ինքը բեկը։ Իսկ հիմա, նա ուրախությամբ, ինչպես ինքն ասաց, «գիշերը դարձրել ե ցերեկ, իսկ իր աչքերն՝ աստղեր»։ Նա պահում ե 2700 հատ կոլտնտեսային կարակուլ վոչխարներ, և վորպեսզի մութ գիշերներին վոչ մի նորածին գառ չկորչի, չշփոթվի ու չսատկի, հարկավոր ե, վորպեսզի իրոք աչքերը դառնան աստղեր։ Ցերը

արածեցնում ես քո կոլտնտեսային նախիրը և վոչ թե ուրիշի, բեգի և յերբ ուրախ ե սիրտդ, ամենամութ գիշերն անդամ թվում ե վորպես լուսավոր ցերեկ։

Ինչպես ծերունի Նաֆասը չուրախանա նոր կյանքով, յերբ նա չունենալով անդամ հինգ կոպեկ, մեկ տարվա ընթացքում վաստակեց 5000 ռուբլի, յերբ նա յերբեք իր զլուղից դուրս չգալով ճանապարհորդեց այժմ, վորպես ճանապարհորդ, վորպես տուրիստ իր անձնական բավականությունների համար ամբողջ Ուկրաինան, ամբողջ Ղրիմը, Ղարաչայը, իսկ այսոր նա Մոսկվայումն Կրեմլում, խորհրդակցում ե Ստալինի հետ։

Մոսկվա յեկած Դնեպրոպետրովսկի մարզի կոլտնտեսականների հետ ունեցած զրույցի ժամանակ ընկ. Ստալինն ասաց, վոր կոլտնտեսություններն ունեն այն ամենը, ինչ անհրաժեշտ ե ունևոր դառնալու համար։ Նրանց հարկավոր ե եղի միայն մի բան, աղնվորեն աշխատել կոլտնտեսությունում և պահպանել կոլտնտեսության ունեցվածքը։ Ցավ յեթե բոլոր կոլտնտեսականները, բոլորը, այլ վոչ թե մեծամասնությունը կաշխատեն աղնվորեն, ապա կոլտնտեսությունները կլցվեն մթերքներով, կլցվեն ամեն տեսակի բարիքներով և մեր յերկիրը կդառնա ամենահարուստն աշխարհում («Պրավդա» 26-ը դեկտեմբերի 1933 թիվ)։ Ընկ Ստալինի խոսքերն իրականանում են կյանքում։ Հարյուրավոր և հազարավոր կոլտնտեսություններ ստանում են միլիոնների յեկամուտներ։ Հազարավոր և տասնյակ հազարավոր կոլտնտեսություններ լցվել են մթերքներով լցվել են ամեն տեսակի բարիքներով։ Մենք հաստատ և համոզված կերպով գնում ենք դեպի ընդհանուր հարստություն, դեպի չտեսնված առատություն. Ցնորը, վոր հասարակարգի որոք, վոր իշխանության որոք եր, վոր Վորոնեժի բատրակ Աբրահամ Ֆեոդորովիչ Լյուբովշինը (նա նույնպես գտնվում եր Կրեմլում ստախանովականների խորհրդակցությանը) կարող եր ունենալ հացի հինգ տարվա պաշար իր և իր ամբողջ ընտանիքի համար։ Իսկ 12 փութ յուղը, իսկ 4 փութ մեղրը։ Այդ բոլորը վաստակել ե Աբրահամ Ֆեոդորովիչ Լյուբովշինը միայն մեկ տարվա ընթացքում, կոլտնտեսական աղնիվ աշխատանքով։ Անմոռանալի յեն նաև մի ուրիշ ծերունու Դաղստանի ժողովրդական պոետ Սուլեյման Ստալսկու խոսքերը, վորը յերեսթ ունեցավ ստախանովականների նույն այդ խորհրդակցությանը— Կրեմլում։

— Ցես յեկել եմ ասելու քեզ, իմաստագույն ուսուցիչ և

ձեզ, այստեղ նստած նրա աշակերտ ընկերներ վոր մեր հայրենիքը յերջանիկ ե իր մի ծայրից մինչև մյուսը, պատրաստ ե ամեն տեսակի հերոսության և անպարտելի յե, յեթե ինձ նման ծերունիներն զգում են իրենց յերիտասարդ ու ամուր, ինչպես ռազմիկ. Սուլեյման Ստալսկին յերբեք այդպես ազատ չեր յերգել, ինչպես հիմա և վոչինչ նրան այդպես չեր վոգևորում յերգելու համար։ Ցերկինքն առաջներում յերբեք չի յեղել այդպես շլացուցիչ ու թարմ, մարդկային ձեռները, մարդկային յերեսն առաջներում յերբեք չեն յեղել այդպես ջերմ։ Միայն մեզ համար ե արևն արձակում իր գեղեցիկ ճառագայթները, գարունը մեզ համար ե միայն բացվում յերկրի վրա...

Մենք աշխատում ենք ուրախությամբ սոցիալիզմի մեծ, ծայրե ի ծայր արևավառ ամրոցում, մենք կառուցում ենք այնտեղ յերբեք չծերացող կյանք։ Այդ բոլորի համար, մենք պարտական ենք առաջին հերթին Լենինի և Ստալինի կուսակցությանը։ Դրա համար ել Սուլեյման Ստալսկու ճառի վերջին խոսքերը, վորոնք արտահայտում եյին ամբողջ յերկրի, բոլոր ժողովուրդների տրամադրությունը, նվիրված եյին նրան, ով ղեկավարում ե մեր կուսակցությունը, ղեկավարում ե սոցիալիզմի համար մղած ամբողջ պայքարը։

Ցավ այսպես վերքերից բուժված
Ցերջանիկ յերիտասարդությամբ հարբած
Շատ բան տեսած Սուլեյմանը
Ցերգում ե Ստալինի մասին...

1936 ԹԻՎԸ ՍՏԱԽԱՆՈՎԱԿԱՆ ՏԱՐԻ

1936 թիվը—ստախանովական տարի։ Հասկանալու համար թե ինչ ե այդ իրենից ներկայացնում, թվենք ընդամենը մի քանի թվեր, վորոնք չեր խանգարի, յեթե հիշեր յուրաքանչյուր բանվոր, կոլտնտեսական և ծառայող։ Այս տարի, մեր յերկիրը պիտի ստանա 135 միլիոն տոննա ածուխ, 30 միլիոն տոննա նավթ 14 և կես միլիոն տոննա թուջ, 16 միլիոն տոնն պողպատ, 12-ից ավելի միլիոն տոննա պրոկատ։ Մեր գործարանները տալու յեն 1936 թվին 22 միլիարդ ռուբլու զանազան մեքենաներ և մետաղյա գործիքներ։

Մենք ընտելացել ենք վերջին տարիները մեծ թվերի։ Դրա համար ել ավելորդ չեր լինի հիշել, վոր 1913 թվին ցարա-

կան Ռուսաստանի արդյունաբերությունը տվեց ընդամենը 100 հատ ավտոմոբիլներ և այն էլ հավաքելով արտասահմանում գնված այդ մեքենաների մասերը, իսկ մեր խորհրդային գործարանները 1936 թվին տալու են 161 հազար ավտոմոբիլներ։ 1936 թվին մենք կհալենք 1912 թվի համեմատությամբ յերեք և կես անգամ ավելի թուջ, պողպատ և պրոկատ և կունենանք մոտավորապես հինգ անգամ ավելի ածուխ։ Ամրացնելով արդյունաբերությունը, մենք ամրացնում ենք մեր սոցիալիստական հայրենիքի պաշտպանունակությունը։

1936 թիվը ստախանովական տարի—լայն սպառման ապրանքների և մթերքների արտադրության հսկայական աճի տարի է։ Թեթև արդյունաբերության արտադրանքն անցյալ տարվա համեմատությամբ ավելանում է համարյա 30 տոկոսով։ Մեր ֆաբրիկաները տալու են 3 միլիարդ 215 միլիոն մետր բամբակեղենի գործվածքներ, 326 միլիոն մետր վուշի, 90 և կես միլիոն մետր բրդեղենի գործվածքներ և 103,6 միլիոն զույգ կոշիկներ։

Մեր բանվորները, կոլտնտեսականները և ծառայողները պահանջում են դաշնամուրներ և պատեֆոններ, լավ կահկարասիք և վելոսիպեդներ։ 1936 թվին յերկիրը կստանա 10 հազար մոտոցիկլներ, 500 հազար ռադիոընդունիչներ, 500 հազար ձեռքի և գրպանի ժամացույցներ, 800 հազար վելոսիպեդներ և մոտավորապես մեկ միլիոն պատեֆոններ։

1936 թիվը—ստախանովական տարի է նույնպես գյուղատնտեսության համար։ Կոմբայնների խորհրդակցությանն իր արտասանած ճառի մեջ (1935 թվի դեկտեմբերին) ընկ. Ստալինը խնդիր դրեց մոտակա 3—4 տարիների ընթացքում ստանալ յուրաքանչյուր տարի 7—8 միլիարդ փութ հաց։ Արդեն 1936 թվի ընթացքում պիտի հավաքվի 6 միլիարդ 380 միլիոն փութ հաց, 1935 թվի 5 միլիարդ 500 միլիոն փթի փոխարեն։ 1936 թիվը պիտի տա անասնաբուծության նոր վերելք մեր յերկրում։ 1935 թվին ավելացան կես միլիոն ձիեր, 8 միլիոն գլուխ խոշոր յեղջյուրավոր անասուններ, 8,8 միլիոն գլուխ խոզեր, 9,4 միլիոն վոչխարներ և այծեր։ Ընթացիկ տարում, անասունների թվի աճը պիտի լինի էլ ավելի, քան 1935 թվին։ Ցեղային անասունների զարգացման գործում կարվի խոշոր քայլ, ինչպես կոլտնտեսություններում, այնպես և կոլտնտեսականների համար։ Այս տարի հիմնականում կկատարվի կոլտնտեսականների կովազբուկությունը վերացնելու վերաբերյալ ընկ. Ստալինի կողմից տրված ցուցումները։

1936 թվին կոլտնտեսականների յեկամուտն ավելի ևս կավելանա։ Մենք ունենք նաև հսկայական հաջողություններ կուլտուրայի ասպարիզում։ Մինչ հեղափոխական Ռուսաստանում կար 54 հազար յեկեղեցիներ, 23 և կես հազար մատուռներ, 950 հազար վանքեր, 51,1 հազար տերտերներ, 15 հազար սարկավագներ, 46,6 հազար տիրացուներ, 29,1 հազար վարդապետներ։ Այսպես ցարական Ռուսաստանը սերմանել եր տգիտություն և անտիպաշտություն։ Խորհրդային իշխանությունը Հոկտեմբերյան մեծ Հեղափոխության որվանից բաժանեց յեկեղեցին պետությունից և դպրոցը յեկեղեցուց և կուլտուրան ու գիտությունը դարձրեց ամբողջ աշխատավորության սեփականությունը։

Թե ինչքան է ԽՍՀՄ ժողովուրդների կուլտուրայի աճման վերաբերյալ մտահոգությունը, յերևում է թեկուզ և նրանից, որ մեզ մոտ գոյություն ունեն 673 թատրոններ և կրկեսներ, 27,9 կինոկետեր, 12,9 ակումբներ, 45,3 խրճիթ-ընթերցարաններ, 50,6 մասսայական գրադարաններ և 768 թանգարաններ։ 1936 թվին աշխատավորության սոցիալ—կուլտուրական կարիքների համար բաց է թողնված պետության կողմից 21,2 միլիարդ ռուբլի։ Բացի դրանից, ուսուցիչների աշխատավարձի բարձրացման համար հատկացված է 1,3 միլիարդ ռուբլի։ Հիվանդանոցների շինարարության համար բաց է թողնված յերկու անգամ ավելի դումար, քան անցյալ տարի, իսկ դպրոցների շինարարության համար յերեք անգամ ավելի։

Այսպես «Ժողովրդական տնտեսության նոր վերելքի ծրագիրը հանդիսանում է միաժամանակ վորպես մեր յերկրի բանվորների, ծառայողների և կոլտնտեսականների բարեկեցության նոր ընդհանուր վերելքի ծրագիր» (Մոլոտով)։

ԿԱՌՈՒՑԵՆՔ ՍԵՓԱԿԱՆ ՈՒԺԵՐՈՎ, ՍԵՓԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ

Այն բոլորն ինչ կառուցել ենք, այն բոլորն ինչ մենք պատրաստվում ենք կառուցել, այդ բոլորն իրագործվել է և կիրագործվի մեր ֆաբրիկներում, գործարաններում, կոլտնտեսություններում և խորհտնտեսություններում մեր ուժերով և մեր սեփական միջոցներով։

Մեր յերկրի ինդուստրացման ուղին բոլորովին տարբեր է կապիտալիստական յերկրների ինդուստրացման ուղղուց։ «Ծանր արդյունաբերությունն այդ յերկրներում ստեղծվել է կամ խոշոր փոխառությունների կամ ուրիշ յերկրները թալանելու միջոցով կամ էլ մեկ և մյուս միջոցներով միաժամանակ։ Կուսակցությունը գիտեր, որ այդ ճանապարհները փակ են մեր յերկրի համար» (Ստալին)։

Խորհրդային Միության աշխատավորները գնացին կուսակցության և ժողովրդի առաջնորդների—Լենինի և Ստալինի կողմից նշված ուղիով։ Այդ ուղին սեփական խնայողությունների ուղին է, սոցիալիստական կուտակումների ուղին, առանց արտաքին ստրկացուցիչ վարկերի և փոխառությունների տնտեսապես անկախ յերկիր ստեղծելու ուղին։

Ինչպես և ինչ միջոցներով ենք մենք կառուցում։

Այստեղ մեզ անհրաժեշտ է հիշել ընկ. ՍՏԱԼԻՆԻ Ամերիկական ժուրնալիստ ՀՈՈՒԱՐԴԻՆ ասած խոսքերը

«Դուք ասում եք թե մեր սոցիալիստական հասարակությունը կառուցելու համար մենք զոհաբերել ենք անձնական ազատությունը և զրկանքներ ենք կրել։ Ձեր հարցում նկատվում է այն միտքը, թե սոցիալիստական հասարակությունը ժխտում է անձնական ազատությունը։ Այդ սխալ է։ Ի հարկե, վորևե նոր բան կառուցելու համար կարիք է լինում խնայողություն անել, միջոցներ կուտակել ժամանակավորապես կրճատել իր պահանջմունքները և փոխ վերցնել ուրիշներից։ Յեթե ուզում ես նոր տուն կառուցել, փող ես կուտակում, ժամանակավորապես կրճատում ես քո պահանջմունքները, այլապես կարող է պատահել, վոր տունը կառուցել չկարողանաս։ Դա ավելի ևս իրավացի է, յերբ խոսքը վերաբերում է մարդկային ամբողջ նոր հասարակություն կառուցելուն։ Կարիք եր լինում ժամանակավորապես կրճատել մի քանի պահանջմունքներ, համապատասխան միջոցներ կուտակել և լարել ուժերը։ Մենք հենց այդպես էլ վարվեցինք և կառուցեցինք սոցիալիստական հասարակություն։

Սակայն այդ հասարակությունը մենք կառուցեցինք վոչ թե անձնական ազատությունը սահմանափակելու համար, այլ նրա համար, վոր մարդկային անձնավորությունն իրոք ազատ զգա իրեն»։

Ստալինյան այս մեծ խոսքերը մեզ հասկանալի են։ Մենք սոցիալիստական շինարարության մասնակիցներս, մենք ինքներս մեր յերիտասարդ յերկրի հետ միասին անցանք նրա դժվարին ճանապարհը։ Խնայողությունն արվում եր ամեն բանում։ Մենք հաշվում եյինք յուրաքանչյուր կոպեկը։ Մեր խորհրդային պետությունը գտավ անհրաժեշտ միջոցներ և կուտակելու ներդրեց այդպիսին առաջին հերթին արդյունաբերության մեջ։ Յեվ մենք հասանք վերջիվերջո այն բանին, վոր կառուցեցինք սոցիալիստական հասարակություն, վոր շնորհիվ խելացի, Ստալինյան, կատարված սոցիալիստական կուտակման, մենք ունենք հսկայական արդյունքներ.

Մենք վոչ միայն պատվով և մեծագույն հպարտությամբ ամբողջ աշխարհի առջև կառուցեցինք սոցիալիստական հասարակություն, այլև լայնորեն ոգտվում ենք մեր շինարարության պտուղներից—նրա նյութական և կուլտուրական բարիքներից։

Մենք միակ սոցիալիստական յերկիրն ենք աշխարհում։ Մեզ ամեն կողմից շրջապատում են կապիտալիստական պետությունները, վորոնք կատաղի կերպով պատրաստվում են նոր պատերազմների աշխարհը բաժանելու համար, վորովհետև կապիտալիզմի ճգնաժամից դուրս գալու միակ յելքը իմպերիալիստական պետությունները գտնում են պատերազմի մեջ։ Պատերազմական վտանգի յերկու ոջախ — արևմուտքում — ֆաշիստական Գերմանիան և Յապոնիան—արևելքում սպառնում են անմիջականորեն Խորհրդային Միությանը։ Մեր կառավարությունն ամբողջ ուժով և միջոցներով, արտահայտելով իր ժողովրդի կամքը պայքարում է խաղաղության համար։ Մենք չենք ցանկանում պատերազմ, սակայն մենք չպետք է մոռանանք պատերազմի վտանգի մասին և բոլոր միջոցներով պիտի ամրացնենք մեր յերկրի պաշտպանունակությունը։ Մեր կուսակցության ղեկավարությամբ, յերկրի ամբողջ աշխատավորության բուռն ոժանդակությամբ մենք հաջողությամբ իրականացնում ենք նաև այդ խնդիրը, առանձնացնելով անհրաժեշտ միջոցներ սոցիալիստական հայրենիքը պաշտպանելու համար։

ՄԵՐ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Խորհրդային Միության աշխատավորներն ունեն խոշոր յերախտիք համաշխարհային պրոլետարական շարժման հանդեպ։ Նրանք ցույց տվին աշխարհին, թե ինչպես պիտի վերցնել իշ-

խանությունը, ինչպես պիտի ամրացնել պրոլետարական դիկտատուրան, ինչպես պիտի սոցիալիզմը կառուցել և ինչպես ձեռք բերել հաղթությունը։

Նա ձեռք է բերվում։

Անսահման նվիրվածությամբ իր իշխանության ու կուսակցության և պատրաստակամությամբ—ցանկացած ժամանակ առաջին իսկ կոչին տալու իր կյանքը սոցիալիզմի համար։

Գիտակից աշխատանքով, ստախանովական աշխատանքով, իշխանության և կուսակցության կողմից նշված ամբողջ արտադրողական պլանների անպայման կատարումով և գերակատարումով։

Պատրաստակամությամբ—ցանկացած ժամանակին ոգնելու իր յերկրին, իր հայրենիքին նաև նյութական ոժանդակությամբ։

Մեր սոցիալիստական պետությունը միջոցները վերցնում է յերկու աղբյուրներից։ Առաջինը և ամենագլխավորը—դա սոցիալիստական արդյունաբերության, տրանսպորտի, գյուղատնտեսության, ապրանքաշրջանառության կուտակումներն են։ 1935 թվին այդ յեկամուտները կազմում եյին 56 միլիարդ 891 միլիոն ռուբլի։

Յերկրորդ աղբյուրը — դա հենց իրեն, ազգաբնակչության խնայողություններն ու միջոցներն են։ Ազգաբնակչության խնայողությունները պետությունը ներգրավում է սոցիալիստական շինարարությունը ֆինանսավորելու համար, գլխավորապես պետական փոխառությունների միջոցով, վորոնց աշխատավորությունը ձեռք է բերում բացառապես կամավորության կարգով։

Առաջին հնգամյակի տարիներում, պետական փոխառությունների միջոցով, աշխատավորությունը տվեց պետությանը 5,8 միլիարդ ռուբլի, իսկ յերկրորդ հնգամյակի առաջին յերեք տարիներում 10,8 միլիարդ ռուբլի։ Ժողովրդական տնտեսության ֆինանսավորման այդ աղբյուրն ունի խոշոր նշանակություն։

Հասկանալի լինելու համար, բերենք այսպիսի մի որինակ. առաջին հնգամյակի փոխառություններից ստացված դրամներով կարելի յեր կառուցել 3 մագնիտոստրոյներ կամ 7 կուզնեցկոստրոյներ կամ 17 դնեպրոստրոյներ կամ 42 տրակտորային գործարաններ։

Ուրիշ խոսքով ասած և մագնիտոգորսկում և կուզնեցկի գործարանում, և Ուրալի պղնձի կոմբինատում, և վոլխովսկու ալյումինի կոմբինատում, և Դնեպրոգեսում և Խարկովի, Չելյաբինսկի և Ստալինգրադի տրակտորային գործարաններում և հարյուրավոր ուրիշ նոր հզոր ձեռնարկությունների մեջ քիչ չեն փոխառություններից մուծված գումարները։ Խորհրդային աշխատավորները դրանով միայն կարող են հպարտանալ։ Ներքին փոխառությունների դիմում են նաև բուրժուական կապիտալիստական յերկրները։ Բայց ինչի՞ վրա յեն գնում այնտեղ այդ գումարները։ Վոստիկանության և բանակի պահպանման, բյուրոկրատական ապարատի ամրացման և պատերազմի վրա։ Այսպես ռազմական ծախսերը Յապոնիայում կազմում են յերկրի ամբողջ բյուջեյի կեսից ավելին։ Բուրժուազիան ոգտագործում է փոխառությունները, վորպես լրացուցիչ միջոց աշխատավորությանը կեղեքելու համար։

Իմպերիալիստական պատերազմի ժամանակ գերմանական ազգաբնակչության ամբողջ խնայողությունը փոխանակված եր ռազմական փոխառության պարտատոմսերով։ Նույն բանն է կատարվում նաև այժմ ֆաշիստական Գերմանիայում։ Այնտեղ ամեն տեսակի պատճառաբանություններով և զանազան նենգամտությունների ճանապարհով հանված են ազգաբնակչության ավանդները խնայողական դրամարկղներից և փոխանակված են փոխառություններով։

Փոխառությունները կապիտալիստական յերկրներում հանդիսանում են, վորպես բորսային զանազան նենգությունների զենք։ Ֆինանսական մագնատների խմբերն ոգտագործում են փոխառությունները, վորպես պետական ապարատի ճնշման միջոց։ Այսպես, ժողովրդական ֆրոնտի հաղթանակից հետո Ֆրանսիայում, ֆինանսական բուրժուազիայի ներկայացուցիչները փորձեցին տատանել ֆրանկի կուրսը և շուկա դուրս բերին հսկայական քանակությամբ պարտքային պարտավորագրեր։

Գնելով փոխառությունը, կապիտալիստը դրանով հենց իրավունք է ստանում «ամեն տարի գանձվող տուրքերից յուրացնել իրեն համար վորոշակի գումար» (Մարքս)։ Փոխառությունը և տուրքերը կապիտալի յերկրներում անքակտելիորեն կապված են միմիանց հետ։ Պետությունն ինչքան շատ պարտ է այնքան ուժեղ է ճնշում հարկային պրեսսը, այնքան ավելի վատ է աշխատավորական մասսաների դրությունը։

Խորհուրդների յերկրում փոխառությունները գնում են նոր ֆաբրիկաների, գործարանների, ՄՏԿ-ների հիվանդանոցների, դպրոցների, ժուրնալների, ԲՈՒՀ-երի, թատրոնների և այլն շինա-

11-38804

բարության վրա, գյուղատնտեսության բարձրացման վրա, այսինքն փոխառությունների հետևանքով աճում է յերկրի հարստությունը, աճում է աշխատավորական լայն մասսաների բարեկեցությունը։

Փոխառությունները կապիտալիստական յերկրներում հանդիսանում են վորպես գաղութային ճնշման և տնտեսապես ավելի թույլ յերկրներ ստրկացնելու մի միջոց։ Խորհրդային Միությունում ընդհակառակը։ Պետությունը փոխառություններից ստացված դրամներով զարգացնում է ազգային հանրապետությունների և մարզերի եկոնոմիկան, զարգացնում է նրանց մեջ ձևով ազգային և բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրա։ Կապիտալիստական յերկրներում փոխառությունը պահողները հանդիսանում են գլխավորապես կապիտալիստները և մանր բուրժուազիան։ Խորհուրդների յերկրում փոխառությունը պահողները հանդիսանում են իր խնայողությունները իր սոցիալիստական տնտեսության շինարարության մեջ ներդրած աշխատավորները։

Միայն խորհրդային միության մեջ է, վոր փոխառությունները դրված են ծառայելու սոցիալիզմին և փոխառություններից ստացված միջոցներն ուղղվում են աշխատավորության շահերի համար։

Այստեղից ել բղխում է այն բուռն ոժանդակությունը դեպի խորհրդային կառավարության փոխառությունները, վորոնք ցույց են տրվում մեր յերկրի ամենալայն մասսաների կողմից։

Այժմ ԽՍՀՄ-ում կան մոտավորապես 50 միլիոն պարտատոմսատերեր։ Փոխառությունները դարձել են մեզանում վորպես աշխատավորական լայն մասսաների խորը նվիրվածությունն արտահայտող մի ձև դեպի իր իշխանությունը, իր կուսակցությունը և ամբողջ սոցիալիստական շինարարությունը։ Մեր փոխառությունները ոգուտ են աշխատավորության համար։ Յեթե յերկիրը շնորհիվ փոխառությունների դարձել է հարուստ և պաշտպանունակ, նշանակում է, վոր պարտատոմսատերը հարուստ է և հանգիստ իր խաղաղ աշխատանքի համար։ Դրա հետ միասին փոխառությունը—մեր անձնական միջոցների լրացուցիչ խնայողության միջոցն է։

Առաջին հնգամյակի տարիներում, ԽՍՀՄ ազգաբնակչությունը ստացել է պետական փոխառություններով յեկամուտ և պարտատոմսերը մարելու կարգով 853,8 միլիոն ռուբլի։ Յերկրորդ հնգամյակի 3 տարիներում, վճարված է ազգաբնակչությանը տոկոսների, շահումների և պարտատոմսերի արժեքները մարելու կարգով 2 միլիարդ—602,8 միլիոն ռուբլի։

Սկսած 1929 թվից, խորհրդային պետության կողմից բաց են թողնվել 7 մասսայական փոխառություններ և պարտատոմսերի քանակն ամեն անգամ անհամեմատ աճել է։ 1929 թվին մենք ունեցինք ընդամենը 10 միլիոն պարտատոմսեր, իսկ այժմ նրանց քանակն ինչպես ասվեց հասնում է 50 միլիոնի։ Դա նշան է ժողովրդի բարձր գիտակցության և նվիրվածության դեպի իր պետությունը։ Դա նշան է աշխատավորության նյութական բարեկեցիկ դրության աճման։

ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆԸ (ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐՎԱ ԲԱԺԻՆ)

Մեր կառավարությունը բաց է թողել նոր պետական ներքին յերկրորդ հնգամյակի (չորրորդ տարվա բաժին) փոխառությունը։ Այդ փոխառության խնդիրն է—ոգնել պետությանը կատարելու 1936 թվի ստախանովական տարվա ծրագիրը։ Այդ ծրագիրն իրագործելու համար, ըստ պետական բյուջեյի պահանջվում է 78 և կես միլիարդ ռուբլի։ Պետական բյուջեյի յեկամուտները հանրայնացված տնտեսությունից կազմում է 71 միլիարդ ռուբլուց քիչ ավելի։ Իսկ մնացած գումարները պիտի հավաքվեն ազգաբնակչության միջոցները մոբիլիզացիայի յենթարկելու ճանապարհով։ Փոխառությունների բաժինը կազմում է 3 միլիարդ ռուբլի։

ԻՆՉՈ՞Վ Է ՏԱՐԲԵՐՎՈՒՄ ՆՈՐ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽՈՐԴ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Յերկրորդ հնգամյակի փոխառությունը (չորրորդ տարվա բաժին) բաց է թողնված 4 միլիարդ ռուբլի, տարեկան 4 տոկոսի հաշվով։

Նախորդ փոխառությունների համեմատությամբ տոկոսն իջեցված է։ Այդ բացատրվում է ժողովրդական տնտեսության զարգացման պայմաններով։ Մեծ են սոցիալիզմի հաջողությունները։ Այդ հիման վրա վերջին տարիներս հսկայական չափով աճեց յերկրի ապրանքաշրջանառությունը։ Մեր կառավարու-

թյունն անշեղորեն տանում է ապրանքների գների իջեցման քաղաքականություն։ Այդ հիման վրա ամրացել է մեր ռուբլին։ Խորհրդային ռուբլու ամրացման գործում առանձնապես մեծ հաջողություններ ձեռք բերվեցին վերջին ժամանակներս։ Քարտային սիստեմի վերացման հետ միասին սահմանվեց միասնական գին, սպեկուլյացիան արմատախիլ անելու համար ստեղծվեցին համապատասխան պայմաններ, ավելացավ կոլտնտեսականների շահագրգռվածությունը—գյուղատնտեսական մթերքների արտադրությունն ավելացնելու համար։ Այդ հանգամանքն իր հերթին բերեց գների զգալի անկում պետական և կոոպերատիվ առևտրում և կոլտնտեսական շուկաներում։ Միայն 1935 թվին աղգաբնակությունը խնայել է գների իջեցման հետևանքով մինչև 5 միլիարդ ռուբլի։ «Հասկանալի յե, որ այդ մեծ չափով բարձրացրեց դրամի դերը աղգաբնակչության աչքում» (Մոլոտով)։ Ռուբլին ամրանում է, նրա գնողական ուժն աճում է բոլորի աչքում։ Դրան նպաստում է նաև պայքարը սոցիալիստական ձեռնարկությունների յեկամտաբերության համար։ Ժողովրդական տնտեսության պլանի ամենակարևոր խնդիրը հանդիսանում է շինարարության արժեքի, արտադրության ինքնարժեքի և հետագա գների իջեցումը։

Այդպիսի պայմաններում նախկին փոխառությունների բարձր արժեքի՝ տարեկան 10—8 տոկոս պահպանումը հակասելու յեր խորհրդային ռուբլու հետագա ամրացման և գների իջեցման քաղաքականությանը։ Այդ պատճառով էլ 1936 թվի փոխառությունը բաց է թողնված տարեկան 4 տոկոս յեկամուտով։

Փոխառության տոկոսի իջեցումը կստեղծի վարկի եժանացում, կպակսեցնի շինարարության, արտադրության, առևտրի վերադիր ծախսերը և կնպաստի գների ավելի ևս իջեցմանը։

Նոր փոխառությունը բաց է թողնվում 20 տարի ժամանակով։ Նախորդ փոխառությունների համեմատությամբ, որոնք բաց եյին թողնվել 10 տարի ժամանակով—ժամկետը յերկարաձգվել է։

Փոխառություններից ստացված միջոցները խորհրդային կառավարությունն ուղղորդում է նոր ֆաբրիկաների և գործարանների շինարարության վրա, նոր արժեքներ ստեղծելու և յերկրի հարստություններն ընդարձակելու համար։ Ինչքան յերկար ժամանակով է ուզում պետությունը փոխառությունների վարկերով, այնքան ավելի շատ արժեքներ նա կարող է

ստեղծել այդ դրամներով։ Խոշոր շինարարությունները պահանջում են մեծ ծախսեր մինչև նրանց շահագործման հանձնելը, մինչև այն ժամկետը, յերբ այդպիսիք սկսում են յեկամուտ բերել։ Այսպիսով, յերկարատև վարկավորման համար, վորպիսիք հանդիսանում են մեր փոխառությունները և, վորոնց միջոցները ներդրվում են շինարարության մեջ, տասնամյա ժամկետը շատ կարճ է։ Մենք այժմ ձեռնամուխ ենք լինում ինդուստրիայի ավելի խոշոր գիգանտների շինարարությանը, քան առաջներում։ Այդ հանգամանքը պահանջում է ներգնել շինարարության և կահավորման մեջ միջոցներն ավելի յերկար ժամկետով։ Ահա, թե ինչո՞ւ 1936 թվի փոխառությունը բաց է թողնվում 20 տարի ժամանակով։ Կապիտալիստական յերկրներում փոխառությունները բաց են թողնվում տասնյակ տարիների – 30, 75, 90 և այլ ժամկետներով։

Նոր փոխառության քսանամյա ժամկետը համապատասխանում է սոցիալիստական պլանային տնտեսության զարգացման հետագա շահերին։ Պետությունն ստանում է փոխառությունների վարկերից ավելի յերկար ժամկետով ոգտվելու հնարավորություն, ստեղծելու ավելի շատ արժեքներ և դրանով իսկ ռուբլին, վորով պետությունը հաշիվներ կտեսնի պարտատոմսատերերի հետ—կամրանա։ Մեկը սերտ կերպով շաղկապված է մյուսի հետ։

Շատ կարևոր է նոր փոխառության մասին խմանալ նաև հետևյալը, բաց են թողնված նոր խոշոր արժողություն ունեցող 500 ռուբլանոց, 300, 200 ռուբլանոց պարտատոմսեր։ Այդ պարտատոմսերից յուրաքանչյուրն ունի հինգ, կամ յերեք կամ յերկու համար և շահելու դեպքում շահումը վճարվում է բոլոր համարներով։ Որինակ, 500 ռուբլանոց պարտատոմսի սերիան շահել է 200 ռուբլի։ Այդ նշանակում է, վոր պարտատոմսատերը կստանա 1000 ռուբլի, այսինքն՝ 5 անգամ 200 ռուբլի։ Բացի դրանից բաց են թողնվում նաև 25 և 10 ռուբլիանոց պարտատոմսեր, վորոնք տրվում են պարտատոմսատերի միայն այն դեպքում, յերբ բաժնեգրության գումարի համաձայն, կամ նախորդ փոխառությունների փոխանակվող պարտատոմսերի գումարի համաձայն չեն կարող նոր փոխառության ավելի խոշոր արժողություն ունեցող պարտատոմսեր տրվել։

Խոշոր արժողություն ունեցող պարտատոմսերի բաց թողնելը համապատասխանում է պետության շահերին—այնքան,

վորքան շրջանառության մեջ յեղած պարտատոմսերի քանակի կրճատումը կլավացնի պետական փոխառությունների կազմակերպման գործը։ Խոշոր արժողություն ունեցող պարտատոմսատերի բաժնեգրությունն ոգտակար նույնպես պարտատոմսերի համար, այնքան, վորքան այդ հանգամանքը կստեղծի պարտատոմսերի պահելու, նրանով—յեկամուտներ ստանալու համար ստուգումներ կատարելու հարմարություններ։

Յուրաքանչյուր աշխատավոր նոր փոխառությանը բաժնեգրվելիս, իրավունք ունի ընտրել իր ցանկացած պարտատոմսն ըստ իր հայեցողության։ Սակայն ոգուտ և հարմար ե, ինչպես պետության, նույնպես և պարտատոմսատիրոջ համար բաժնեգրվել խոշոր արժողություն ունեցող պարտատոմսերի։

ԽՍՀՄ ՎՈՉ ՄԻ ԱՇԽԱՏԱՎՈՐ ԱՌԱՆՑ ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ (ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐՎԱ ԲԱԺԻՆ) ՊԱՐՏԱՏՈՄՍԻ

Փոխառության իրացումը քաղաքի և գյուղի ազգաբնակության մեջ կատարվում ե կոլեկտիվ բաժնեգրման կարգով, յուրաքանչյուր աշխատավորի փոխառությանը կամավոր կերպով մասնակցելու հիման վրա։ Քաղաքներում պարտատոմսերի արժեքը մասամաս վճարելու համար կոլեկտիվ բաժնեգրման կարգով սահմանված ե, ինչպես նախորդ փոխառություններով—10 ամիս։ Բաժնեգրության առաջին մուծումը քաղաքում պիտի կատարել 1936 թվի հուլիսի առաջին կիսի աշխատավարձից, իսկ վերջին մուծումը 1937 թվի ապրիլի 2-րդ կիսի աշխատավարձից։

Կոլտնտեսականները և մենատնտեսները վճարում են իրենց բաժնեգրության գումարը 7 ամսվա ընթացքում այսինքն մինչև 1937 թվի փետրվարի 1-ը։ Կոլտնտեսականները և մենատնտեսներն իրենք են վճարում իրենց փոխառության բաժնեգրության գումարը լիազորների միջոցով, կամ անմիջականորեն գյուղխորհուրդ։ Կոլտնտեսականների փոխառության բաժնեգրության գումարի վճարումը կոլտնտեսության միջոցներից, կամ այդ գումարների փոխանցումը կոլտնտեսության վարչության հաշիվներից արգելվում ե։ Բանվոր-ծառայողների մեջ, փոխառությունն անց ե կացվում «յերեք շաբաթվա աշխատավարձը—փոխարինաբար աշխատավորների պետությանը» նշանաբանի տակ։

Կոլտնտեսականների և մենատնտեսների մեջ փոխառության բաժնեգրությունն անց ե կացվում «յերեք շաբաթվա յեկամուտը—փոխարինաբար խորհրդային կառավարությանը» նշանաբանի տակ։

ԲՈՒՀ-երի և տեխնիկումների սովորողների մեջ փոխառության բաժնեգրությունն անց ե կացվում ամսական թոշակի 1/3-ի չափով։ Արգելվում ե բաժնեգրություն անցկացնել նախնական և միջնակարգ դպրոցներում։

ՆԱԽՈՐԴ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ (ԿՈՆՎԵՐՍԻԱ)

Նոր, յերկրորդ հնգամյակի չորրորդ տարվա փոխառության բաց թողման հետ միասին, կառավարությունը վորոշում ընդունեց նաև առաջներում բաց թողնված մասսայական փոխառությունների պարտատոմսերի փոխանակման (կոնվերսիա) մասին։ Այդ պարտատոմսերը փոխանակվում են նոր փոխառության պարտատոմսերով։ Նախորդ մասսայական փոխառությունների պարտատոմսերը նոր փոխառության պարտատոմսերի հետ փոխանակելու ճանապարհով կպակսի պետության համար բոլոր փոխառությունների վարկերի արժեքը, իսկ այդ կոժանդակի խորհրդային ռուբլու հետագա ամրացմանը, վորը պետության, ինչպես և աշխատավորության բարեկեցության հետագա աճման համար ունի խոշոր նշանակություն։

Նախորդ փոխառությունների պարտատոմսերի փոխանակումը նոր փոխառությունով, հնարավորություն կտա խորհրդային պետության ոգտագործել շինարարության համար վոչ միայն, նոր փոխառությունից ստացված միջոցները, այլև այն միջոցները, վորոնց նա ստացել ե հին փոխառություններով և վորոնց վերադարձումն ազգաբնակությանը հետաձգվում ե հաջորդ տարիներին։ Այսպիսով, նախորդ փոխառությունների պարտատոմսերի փոխանակումը յերկրորդ հնգամյակի փոխառության չորրորդ տարվա բաժին) պարտատոմսերով կոժանդակի փոխառությունից ստացված միջոցները լավագույն կերպով ոգտագործելու սոցիալիստական շինարարության, արդյունաբերության և եներգետիկայի նոր գիգանտների շինարարության վրա։

Փոխանակումը կապահովի աշխատավոր պարտատոմսատերերի սպասարկման բարելավումը։ Աճեց և ամրացավ խորհրդային պետական վարկը։ Մեծացել ե նրա ծավալը։ ԽՍՀՄ-ում պարտատոմսատերերի ձեռքում գտնվում են 860 միլիոն պար-

տատոմսեր առաջներում բաց թողնված 7 մասսայական փոխառություններից։ Այդ փոխառություններն ունեն տարբեր յեկամտաբերություն, մարման տարբեր ժամկետներ, վիճակահանությունների տարբեր ժամկետներ։ Յուրաքանչյուր պարտատոմս արժեքավոր թուղթ է, նա պահանջում է, որպեսզի նրան ղեկավարեն։ Իսկ այդ նշանակում է, որ անհրաժեշտ է պահել պարտատոմսերը կանոնավոր, ստուգել յուրաքանչյուր վիճակահանությունից հետո, ժամանակին ստանալ նրանցով յեկամուտները (տոկոսները և շահումները)։ Սակայն շատ պարտատոմսատերերի համար, որոնք ունեն իրենց ձեռքում մանր արժեքներ ունեցող մեծ քանակությամբ պարտատոմսեր, դժվար կլինի հետևել իրենց պարտատոմսերի շահումներին։ Դրա համար էլ նախորդ փոխառություններով չեն պահանջվել հազարավոր շահումներ։

Անհրաժեշտ է հեշտացնել պարտատոմսատերերի պարտատոմսերը պահելու, ստուգելու և այդ պարտատոմսերով շահումներն իր ժամանակին ստանալու գործը։

Դրա համար հարկավոր է, նախ և առաջ վերացնել փոխառությունների պայմանների զանազանությունը, կրճատել պարտատոմսերի քանակը և նրանց վիճակահանությունները և այլն, ուրիշ խոսքով ասած, բոլոր փոխառությունները միավորել մեկ փոխառության մեջ, տարբեր տեսակի և մանր արժողություն ունեցող բազմաթիվ պարտատոմսերը փոխարինել մեկ փոխառության խոշոր արժեք ունեցող պարտատոմսերով։ Նախորդ փոխառությունների պարտատոմսերի փոխանակումը համապատասխանում է այդ նպատակին։ Այդ հանգամանքը կհեշտացնի պարտատոմսատերերին իրենց պարտատոմսերը պահելու, ստուգելու և նրանցով յեկամուտները ժամանակին ստանալու համար։

Պետության համար ևս դժվար է գործ ունենալ մեծ քանակությամբ պարտատոմսերի հետ։ Միայն 1936 թվի ընթացքում, խնայողական դրամարկղները պիտի վճարեն 40 միլիոն շահումներ. մարման վիճակահանություններում դուրս յեկած 30 միլիոն պարտատոմսեր և 117 միլիոն կուպոններ։ Փոխանակման հետևանքով շրջանառության մեջ յեղած պարտատոմսերի քանակը կկրճատվի յերկու-յերեք անգամ։

Փոխանակումը (կոնվերսիան) կոժանդակի, այսպիսով, կարգավորել և պարզացնել պետական փոխառությունների ամբողջ աշխատանքը, պարտատոմսատերերի իրոք կուլտուրական ու հստակ սպասարկմանը։ Բնական է, որ դրանով իսկ կամրացնի նաև մեր ներքին պետական վարկը։ Կապիտալիստական պետությունները հաճախ դիմում են կոնվերսիաների, պետական պարտքի դումարն այդ ձևով պակսեցնելու համար։ Մեր պետական փոխառությունների պարտատոմսերի փոխանակումը սկզբունքորեն տարբերվում է կապիտալիստական յերկրներում կատարվող կոնվերսիաներից։

Կապիտալիստական պետությունները կոնվերսիայի ոգնությամբ խլում են աշխատավորության միջոցները, բյուջետային դեֆիցիտները, ռազմական ծախսերը ծածկելու, ինչպես և իրենց իմպերիալիստական քաղաքականությունն իրագործելու համար։ Կապիտալիստական պետությունները դիմում են փոխառությունների կոնվերսիայի վայլուտային քաոսի և դրամական շրջանառության խախտման հետևանքով։ Կատարելով կոնվերսիան «փոխանակման ազատություն» նշանաբանի տակ, կապիտալիստական յերկրները միաժամանակ ամեն կերպ դժվարացնում են պարտատոմսերի փոխանակումը մանր պարտատոմսերի համար (փոխանակման շատ խիստ պայմաններ սահմանելը, կոնվերսիայի մասին ուշ հայտարարելը—ժամկետն անցնելու նախորյակին և այլն խորամանկություններ) և ի վերջո գցելով կոնվերսիայի ամբողջ ծանրությունը մանր պարտատոմսատերերի վրա։

ԽՍՀՄ-ում ժողովրդական յեկամուտը լրիվ չափով և ամբողջությամբ ծախսվում է աշխատավորության շահերի համար—նրանց կյանքի կենցաղային և կուլտուրական մակարդակը բարձրացնելու, յերկրի հոսաբակական հարստությունն ավելացնելու և պրոլետական պետության տնտեսական և պաշտպանողական հզորությունն ամրացնելու համար։ Մեզ մոտ աշխատավորության շահերն անբաժանելի յեն պետության շահերից։ Լրացուցիչ միջոցները, որոնք պետությունը կստանա պետական փոխառությունների պարտատոմսերի փոխանակման հետևանքով, կոգտագործվեն սոցիալիզմի շինարարության տեմպերն արագացնելու, այսինքն հենց իրենց աշխատավորների կյանքը լավացնելու համար։

ԻՆՉՊԵՍ ՊԻՏԻ ԿԱՏԱՐՎԻ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ

Պարտատոմսերի փոխանակմանը—այդ մեծ և բարդ աշխատանքին պիտի պատրաստվել. մանրազնին կերպով։ Փոխանակման կարգը հետևյալն է. փոխառության բաժնեգրության հետ

միասին կազմվում է նաև պարտատոմսերի փոխանակման համար պարտատոմսատերերի ցուցակը։

Ցուցակի մեջ յուրաքանչյուր պարտատոմսատերը ցույց է տալիս, թե ինչքան և ինչ արժողության պարտատոմս ունի ինքը նախորդ փոխառություններից և ինչ արժողության պարտատոմսեր է ցանկանում վերցնել նոր փոխառությունից նրանց փոխարեն։ Այդ ցուցակները քաղաքում կազմվում են ոժանդակող հանձնաժողովների կողմից և հաշվի յեն առնվում հիմնարկ-ձեռնարկության հաշվապահության կողմից, իսկ գյուղերում գյուղխորհուրդների և կոլտնտեսությունների կողմից։ Նոր փոխառության պարտատոմսերի պահանջը փոխանակման համար ըստ յուրաքանչյուր հիմնարկ-ձեռնարկության կոլեկտիվի, յուրաքանչյուր գյուղխորհրդի և կոլտնտեսության համար կսահմանվի համաձայն այդ ցուցակների։

Այնպես, ինչպես փոխառության բաժնեգրության ժամանակ, յուրաքանչյուր պարտատոմսատեր կամավոր կերպով ընտրում է նոր փոխառության այնպիսի արժողություն ունեցող պարտատոմսեր, որոնց նա ցանկանում է ստանալ նախորդ փոխառությունների իր պարտատոմսերի փոխարեն։ Բայց հարկավոր է հիշել, որ պետության և յուրաքանչյուր պարտատոմսատիրոջ համար ավելի հարմար և ձեռնտու յե ընտրել խոշոր արժողություն ունեցող պարտատոմսեր։

Պարտատոմսատերերի ցուցակների կազմումը փոխանակման նպատակով, պիտի վերջանա փոխառության բաժնեգրության աշխատանքները քաղաքի աշխատավորների յուրաքանչյուր կոլեկտիվում վերջանալուց 3—5 օրից վոչ ուշ, իսկ յուրաքանչյուր կոլտնտեսությունում և գյուղխորհրդում՝ 5—7 օրից վոչ ուշ։

Պարտատոմսերի փաստացի փոխանակումն սկսվում 1396 թվի սեպտեմբերի 1-ից և պիտի վերջանա 1937 թվի մայիս 1-ին։ Բանվորների և ծառայողների պարտատոմսերի փոխանակումը կկատարվի նրանց աշխատավայրում հիմնարկ-ձեռնարկության հաշվապահության միջոցով, կոլտնտեսականների—անմիջականորեն կոլտնտեսություններում, իսկ մենատնտեսների պարտատոմսերի փոխանակումը—գյուղխորհուրդներում, ուր կմեկնեն շրջնայդրամարկղի լիազորները։ Բացի դրանից, յուրաքանչյուր պարտատոմսատեր կարող է փոխանակել իր պարտատոմսերը խնայողական դրամարկղում։ 1940 թվի գեկտեմբերի 1-ից նախորդ

բաստայական փոխառությունների պարտատոմսերը վոչնչացվում են, այսինքն՝ չեն համարվում ուժի մեջ։ Սակայն պարտատոմսատերը մինչ այն ժամկետը չպետք է սպասի, վորովհետև սկսած 1936 թվի սեպտեմբերի 1-ից այդ պարտատոմսերն այլևս վոչ մի յեկամուտ չեն բերի պարտատոմսատիրոջ համար։ Մինչդեռ 37 թվի հուլիսին տեղի կունենա նոր փոխառության շահումների առաջին վիճակահանությունը։

Պարտատոմսատերերը պիտի նույնպես հիշեն, վոր մինչև 1936 թվի սեպտեմբերի 1-ը փոխանակվող բոլոր փոխառություններով, սովորական կարգով տեղի կունենան այդ փոխառությունների համար նշանակված վիճակահանությունները։ Պարտատոմսերի փոխանակումից հետո, նախորդ փոխառությունների շահումները չեն վճարվի։ Այդ պատճառով ել մինչև փոխանակությունը հարկավոր է ամենամանրամասնորեն կերպով ստուգել, թե արդյոք ստացված են բոլոր յեկամուտները հին պարտատոմսերով։

Ոժանդակող հանձնաժողովի աշխատակիցները և բոլորը նրանք ովքեր ակտիվ մասնակցություն կունենան փոխառության բաժնեգրությունն անկացնելու աշխատանքների մեջ, պիտի հիշեն, վոր չի կարելի անջատել փոխառության բաժնեգրության աշխատանքները պարտատոմսերի փոխանակման աշխատանքներից։ Նա, ով թեկուզ և լավ կատարի փոխառության բաժնեգրության աշխատանքները, իսկ փոխանակման աշխատանքները կատարելի, այսինքն պարտատոմսերի փոխանակման կազմած ցուցակները չի ձևակերպի հստակորեն, նա վատ ծառայություն մատուցած կլինի և պետությանը և իր աշխատանքի ընկերներին։

Բանվոր-ծառայողների յուրաքանչյուր կոլեկտիվի, յուրաքանչյուր կոլտնտեսության և գյուղխորհրդի նոր փոխառության իրացման հաջողությունները կգնահատվեն։ վոչ միայն փոխառության բաժնեգրության մեծ ընդգրկվածության արդյունքներով, այլև պարտատոմսերի ցուցակները փոխանակման համար ժամանակին և լրիվ չափով կազմելու արդյունքներով։

* * *

Մենք յերկրորդ հնգամյակի չորրորդ տարվա փոխառության իրացումն անց ենք կացնում մեր սոցիալիստական հայրենիքի հսկայական վերելքի պայմաններում, ՆՍՀՄ ժողովուրդ-

ների նյութական մակարդակի հսկայական աճման և նրանց կուլտուրայի ժիծաղուն ծաղկման պայմաններում։

Դասակարգային թշնամի տարրերի բոլոր փորձերին—խանգարելու նոր փոխառության բաժնեգրության և նախորդ մասսայական փոխխառությունների փոխանակման հաջողությունները—կտանք վճռական հակահարված։

Ազահովենք հեղափոխական աչալրջությունը փոխառության իրացման և պարտատոմսերի փոխանակման գործում։

1936 թիվը—ստախանովական տարին նշանակալից կդարձնենք նաև մի նոր հաղթանակով—հաջողությամբ իրացնենք խորհրդային կառավարության՝ յերկրորդ հնգամյակի (չորրորդ տարվա բաժին) նոր փոխառությունը։

Կազմակերպված և հստակորեն կատարենք կառավարության վորոշումը՝ նախորդ պետական մասսայական փոխառությունների պարտատոմսերի փոխանակման (կոնվերսիա) մասին։

Ա. Ս. Ս. Հ.
ԱՐԽԻՎ
ՊՐԱՍԼԱՆ

30

ՀՀ Ազգային գրադարան
NL0936638

23 ИЮЛ 1936

530

11
28204